

ոմն յոյն, որ է ի դրան վէզիր Քէհրային,  
 եւ նորօք դրդեալ զՔէհրայն, զչպատրիկ ե-  
 րէց, Թորոսն ի գլուխ առնելով, արարին  
 խափանումն եւ բռնութեամբ ետուն հանել ի  
 քաղաքէն եւ տարեալ ի Բէկ Օղլին՝ Թաղե-  
 ցաք: Այսքան չարիք ի Պատրիկ Թորոս չե-  
 րիցէն եւ ի Քոմուրճէն եւ իւր չար զաւակէն  
 ել: Պատճառն այս էր, որ նղովեալ Թոռն  
 ունի արեղայ եղեալ յայսմ ամի, բերին առ  
 Հոգեւոր Տէրն յառաջ քան զՀամբարձումն եւ  
 բազումս թախանձեցին տալ նմա իշխանու-  
 թիւն վարդապետութեան, զոր ոչ հաւանեալ  
 զՎեհն, ասելով՝ թէ տղայ է եւ նոր արե-  
 ղայ, երթեալ էջմիածինն ուսցի զկատարե-  
 լութիւն ուսման եւ ի զէպ ժամանակի կա-  
 տարեցի խնդիր ձեր: Բայց իբրեւ եկն համ-  
 բաւ նղովից նոցին, որ ի քէն, վարեաց եւ  
 աքտորեաց յինքենէ եւ այժմ բնակի մերձ ի  
 Նիկոմիդայ Արմաշու վանք կոչեցեալ, առ  
 Մարկոս Եպիսկոպոսն: Յայսմ պատճառէ  
 այսքան չարիք դործեցին հրապարակաւ գո-  
 չելով զարարս իւրեանց մեծաւ անղգամու-  
 թեամբ: Իսկ կտակ Վեհին այս եղեւ առաջի  
 բազմաց, զի հարկեալ ոմանց՝ թէ ո՞վ իցէ  
 յետ քո նստելոց յԱթոռն, ասացեք էք՝ թէ  
 յառաջ ասացեր եմ վասն Սահակ Վրդ-պտին,  
 զնոյն եւ այժմ վերստին հաստատեմ կտա-  
 կաւ, նա՛ է իմ եւ սր. Աթոռոյն ժառանգն:  
 Յետոյ զմեզ կոչեաց եւ դարձեալ կրկնեաց  
 զնոյն բան, մեք ասացաք՝ թէ լինի թէ ըստ  
 ժամանակիս բերմանցն չուղեն բազումք զի-  
 սահակ Վրդ-պտն եւ լինի խոռովութիւն բազ-